

895 c.

4-31





2017-07  
ԼԵԶՈՒՆ ԿՏՐԱԾ  
ՕՒՏԻԿԸ



8950  
L 31

11-

**ԼԵԶՈՒՆ ԿՏՐԱԾ  
ԾԻՏԻԿԸ**

3950  
L-30 w

ՀԱՊՈՆԱԿԱՆ ՀԵՔՅԱԹ

**ՔԱՐԳՍ.  
ՀՈՎ.Է. ԹՈՒՄԱՆՅԱՆ.**

**ՊԵՏՐԶՕՏ  
ՀԼՅԵԿՄ Կ Կ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1938**



30 .04. 2013

13938

Գատ խմբագիր՝ Նվ. Քուժանյան  
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան  
Սրբադրիչ՝ Թ. Հովակիմյան



14 29  
38



Վաղուց պատահած բանն է...  
Ասում են՝ մի չար պառավ  
ուզում է ճերմակեղենը ուրա-  
յի. մի քիչ ուրա յե դնում  
ամանի մեջ:

Գլավիտի լիազոր՝ Կ-4840 Հր. ստ. № 4306.  
Գատվեր 2. Տիրաժ 6000.  
Տպագրական 3/4 մամ. Մեկ մամ. 12000 նիշ.  
Հեղինակային 1/13 մամ.  
Հանձնված է արտադրության 2 հունվարի 1938 թ.  
Ստորագրված է տպագրության 26 փետրվարի 1938 թ.  
Գինը 1 ո. 20 կոպ.

Պետհրատի 1 տպարան, Յերևան, Լենինի փող. 65



Հարեանի ձեռնասովոր ծիտը  
գնում է ոսրան կտցահարում:  
Պառավը վրա յե հասնում:

— «Այ դու անպիտան արա-  
րած...» բարկանում է վրեն ու  
բռնում է լեզուն կտրում:

Ծիտիկը թռչում է գնում:  
Հարեվանուհին լսում է, վոր  
իր սիրելի ծիտիկի լեզուն կրտ-  
րել են: Մաստիկ վշտանում  
է. վեր է կենում իր մարդու  
հետ ճամփա յե բռնում, սար  
ու ձոր ընկնում, վոր իմանա  
թե վոր կողմը թռավ իր ծի-  
տիկը:





Մարդ ու կնիկ գնում են ու  
ձեն տալի:

— Վնրտեղ ե լեզուն կտրած  
ծիտիկը: Լեզուն կտրած ծի-  
տիկը վնրտեղ ե կենում:



Վերջապես գտնում են ծի-  
տիկի տունը:





Ծիտիկը վոր տեսնում է իր հին տերն ու տիրուհին իրեն տես են յեկել՝ ուրախանում, աշխարհքով մին է լինում:

Ներս է հրավիրում, շնորհակալություն է անում առաջվան տեսած լավությունների համար ու պատիվ է տալի:

Սեղան է բաց անում, ենքան ձուկն ու գինի յե լցնում, վոր ել դատարկ տեղ չի մնում: Կինը, վորդիքն ու թոռներն ել վոտի վրա՝ ծառայում են:

Վերջը ինքն ել բաժակը մի կողմն է շարտում ու վեր կենում ծտապարի պար գալի: Ու եսպես ուրախ անց են կացնում ամբողջ որը:









իրենց տուն  
գնալու ժամանակն  
է: Եստեղ ծիտիկը գնում է  
յերկու ուռի զամբյուղ է բե-  
րում: Ասում է.

— Այ ես յերկու զամբյուղը  
մինը թեթև, մյուսը ծանր.


փորը կուզեք՝ ընարեցեք ձեզ  
համար:

Հյուրերը թե՛

— Մենք պառավ մարդիկ ենք.  
բեր մեզ թեթևը տուր, ավելի  
լավ է հեշտ կտանենք. ծանրն  
ինչ ենք անում:







Առնում են թեթի գամբյուղն  
ու վերադառնում տուն:

Տանը ասում են.

— Բեր մի բաց անենք, տես-  
նենք ինչ կա մեջը:

— Բաց են անում—ինչ են  
տեսնում, ել վոսկի, ել արծաթ,  
ել անգին քար, ել թոփերով  
մետաքսեղեն... են տեսակ մի  
բան, վոր իրենց որում իսկի  
մտքներովն ել չեն անցկացրել:

Քանի հանում են, ենքան ա-  
վելի շատ ե մտում մեջը:

Անվերջ—անհատնում:

Ու միանգամից հարստանում  
են:




Ես բանը լսում ե ծիտիկի լե-  
զուն կտրող չար պառավը: Նա-  
խանձում ե հարևանների բախ-  
տին: Հարց ու փորձ ե անում  
թե փորտեղ ե կենում լեզուն  
կտրած ծիտիկը, տեղն ու ճամ-  
փեն սովորում ե:

— Յես ել կերթամ ծիտիկի  
մոտ, ասում ե ու ճամփա ընկ-  
նում: Գնում ե գտնում: Իար-  
ձյալ ծիտիկը յերկու զամբյուղ  
ե բերում ու ասում.

— Ահա յերկու զամբյուղ,  
մինը ծանր, մյուսը թեթև, վորն  
ուզում ես շուկի քեզ համար:

Պառավը միտք ե անում՝ վորի-  
մեջ գանձն ինչքան շատ լինի՝  
զամբյուղն ել ենքան ծանր  
կըլինի, ասում ե—բեր ծանր  
զամբյուղը տուր ինձ:








Շալաիում ե ծանր դամբյուղն  
 ու ճամփա ընկնում դեպի տունն:  
 Զամբյուղը քարի պես ծանր  
 ե լինում—տաննեը դժար: Տըն-  
 քալով տանում ե:

Ծիտիկները յետևից մտիկ են  
 անում ու ծիծաղում:

Տանում ե տուն: Տանում ե,  
 ագահ ագահ բաց ե անում:






Բաց է անում թե չե աղմուկով դուրս են թափվում այլանդակ—անճոռնի չար վոզիները—տեղն ու տեղը խեղդում չար պառավին:









ՀՀ Ազգային գրադարան



NL0401684



13937